ԿԱՐԱՊԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ «ԵՐԿՐԱԳՈՒՆԴ» ԹԵՐԹԸ

ԿԱՐԻՆԵ ԱՂԱՄՅԱՆ

Կարապետ Շահնազարյանը XIX դ. 50—60-ական թվականների լուսավորական մտքի ներկայացուցիչներից է, ժամանակի մշակութային և հասարակական անվանի գործիչներից մեկը։ Նրա կյանքն ու գործունեությունը խորությամբ չեն ուսումնասիրվել ոչ նախահեղափոխական շրջանի, ոչ էլ սովետահայ պատմաբանների կամ գրականագետների կողմից, որոնց հոդվածներում և աշխատություններում Շահնազարյանը որակվել է որպես ազգային-պահպանողական գործիչ, իսկ «Երկրագունդը»՝ համապատասխան ուղղությանը պատկանող պարբերական[1]։

XIX դ. 60-ական թվականներին «Երկրագունդում» Շահնազարյանի հրատարակած հոդվածների, ակնարկների, քաղաքական տեսությունների մանրակրկիտ ուսումնասիրությունն ու վերլուծությունը բերում է այն համոզման, որ Շահնազարյանի գործունեությանն ու աշխարհայացքին, նրա լրագրին տրված գնահատականները կրել են միակողմանի բնույթ՝ օբյեկտիվորեն չարտացոլելով դրանց էությունը։

Կարապետ Շահնազարյանը ծնվել է 1814 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում[2]։ Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, ապա Թիֆլիսում՝ Արղանյանների մասնավոր վարժարանում։ 1836 թ. նա ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը։ 1839—1842 թթ. պաշտոնավարել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում որպես տեսուչ և ուսուցիչ։ 1843 թ. Շահնազարյանը Տաթևում ձեռնադրվում է վարդապետ։ 1846 թ. տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ Ներսես կաթողիկոսը նրան նշանակում է թեմական ատյանի նախանդամ, հետագայում՝ Ներսիսյան դպրոցի խորհրդարանի անդամ, ապա՝ վերատեսուչ։ 1850 թ. մեկնում է Կ. Պոլիս[3]։ Այստեղ Շահնազարյանը նշանակվում է Ղալաթիայի եկեղեցու քարոզիչ։ Նախատեսվում էր Կ. Պոլսում հիմնել հոգևոր վարժարան և դրա տեսչությունը հանձնել նրան։ Սակայն պոլսահայ ամիրայության և կղերականության գաղափարախոս Հովհաննես Ջամուռճյանը նրա դեմ է տրամադրում ամիրաներին ու բարձրաստիճան հոգևորականությանը և, փորձելով խափանել այդ գործը, լուրեր տարածում, թե Շահնազարյանը հակառակ է լուսավորչական եկեղեցուն։ 1851 թ. Շահնազարյանի պահանջով կազմված հանձնաժողովը, պատրիարքարանի երկու նիստերում լսելով կողմերին, արդարացնում է Շահնազարյանին[4]։ Այս միջադեպն ի նկատի ուներ Նալբանդյանը, երբ իր «Նկատողություն» հոդվածում գրում էր. «...Մխիթարյանք մերժում են այժմ յուրյանց Միարարների (unitor) ձեռքով արվեստակած Դա-

---

1 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, 1960, Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, Վ. Փարթամյան, Անգլիայի գաղութ («Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981) և այլն։

2 Նրա կենսագրության մասին մանրամասն տե՛ս Կ. Կոստանյան, Կարապետ վարդապետ Շահնազարյանը. կենսագրական ակնարկ, Թիֆլիս, 1911։

3 Կ. Շահնազարյանը Թիֆլիսից մեկնել է 1850 թ. օգոստոսի 14-ին և Կ. Պոլիս ժամանել նույն թվականի սեպտեմբերի 28-ին [տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վ. 435]։

4 «Արևելյան մամուլ», 1875, № 6, էջ 218—225, № 7, էջ 257—264, № 8, էջ 286—294, № 9, էջ 321—328։

շանց թուղթը, այն որ հիսներորդ թվականներում արժ. Կարապետ Շահնազարյանց վարդապետի մերժելուն համար քիչ էր մնացել, որ Միջնաղարյանք Վոսփորում խեղդեին խեղճ վարդապետին»[5]։

1853 թ. Շահնազարյանը տեղափոխվում է Փարիզ[6], որտեղ հետագայում հաստատում է իր տպարանը և սկսում «Շար Հայ պատմագրաց» մատենաշարի հրատարակությունը։ 1857—1862 թթ. նա տպագրում է Ղևոնդ վարդապետի, Ստեփանոս Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Օրբելյանի, Սմբատ Սպարապետի, Վահրամ Բաբռնու և Թովմա Մեծոփեցու աշխատությունները՝ համառոտ ծանոթագրություններով։ Միաժամանակ նա հրատարակում է նաև իր աշխատությունները՝ «Դաշանց թղթի քննությունն ու հերքումը», «Ընդարձակ տեղագրություն Հայաստանի» և այլն։ Շահնազարյանը ժամանակին ընտրվել է Փարիզի Արևելյան ընկերության, ինչպես նաև Ճեմարանի խորհրդարանի անդամ։

Զեյթունի 1862 թ. ապստամբության օրերին Շահնազարյանը մի հիշատակագիր է ներկայացնում Նապոլեոն III կայսրին՝ նրա ուշադրությունը բևեռելով Կիլիկիայի հայերի վիճակի վրա։ Այս կապակցությամբ «Զեյթունի անցքեր» վերնագրով հոդված է տպագրում «Փարիզ» թերթում[7], կազմակերպում է դրամական հանգանակություն՝ ապստամբներին օգնելու նպատակով[8]։

1862 թ. օգոստոսին Շահնազարյանին Մանչեստրի հայ համայնքը հրավիրում է Անգլիա՝ ստանձնելու տեղի հայության հոգևոր առաջնորդի պաշտոնը, ուր և նա մեկնում է 1863 թ. փետրվարին[9]։ Մանչեստրում նա սկսում է հրատարակել «Երկրագունդ» թերթը, որի առաջին համարը լույս է տեսնում 1863 թ. հուլիսի 30-ին, իսկ վերջինը՝ 30-րդը, 1864 թ. հոկտեմբերի 4-ին, որից հետո դրա հրատարակությունը դադարեցվում է Շահնազարյանի հիվանդության պատճառով։ Բուժման նպատակով 1864 թ. նա տեղափոխվում է նախ Եգիպտոս, ապա՝ Կ. Պոլիս, որտեղ և վախճանվում է 1865 թ. օգոստոսին։

Մ. Նալբանդյանն առաջին անգամ Շահնազարյանին հանդիպել է Փարիզում 1859 թ. գարնանը։ Իր «Հիշատակարանում» նա գովեստով է խոսում վերջինիս հրատարակչական աշխատանքի մասին՝ բնութագրելով նրան որպես խոշոր հրատարակիչ. «Որպես հնության հիշատակարան պատվելի է մեզ այս հրատարակությունը և այն ազգային դպրությամբ պարապողների համար (խոսքը «Շար Հայ պատմագրաց» մատենաշարի մասին է—Կ. Ա.). թող արդո տպադրողը հաճի ընդունել մեր շնորհակալությունը»[10]։ Շահնազարյանի հետ Նալբանդյանի անձնական ծանոթության վկայություններից է նաև այն, որ վերջինիս ծոցատետրի՝ 1959 թ. գրված հասցեների ցուցակում կա նաև Շահնազարյա-

---

5 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 4, Երևան, 1983, էջ 393։ Ուշագրավ է, որ Նալբանդյանի այս՝ «Նկատողություն» հոդվածը (գրված՝ 1865 թ.) և 1863 թ. դեկտեմբերի 11-ին գրած «Նկատողություն» հոդվածը առաջին անգամ տպագրվել են 1871 թ. Կ. Պոլսում՝ Նուպար-Շահնազարյան վարժարանի տպարանում լույս ընծայվող «Երկրագունտ» շաբաթաթերթում։ Վերջինս խմբագրվում էր վարժարանի սաների կողմից և, ինչպես նրշվում էր լրագրի առաջին համարի առաջաբանում, շարունակում էր Կ. Շահնազարյանի սկսած գործը, Մանչեստրում նրա հրատարակած «Երկրագունդ» ավանդույթները (տե՛ս «Երկրագունտ», 3. I. 1870)։

6 Շահնազարյանի՝ Փարիզ տեղափոխման փաստը թվագրվել է 1855 թ.։ Իրականում նա Փարիզ է մեկնել 1853 թ. երկրորդ կեսին (տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 101, վ. 9, «Արշալույս արարատյան», 2. VII. 1854)։

7 Տե՛ս «Փարիզ», 26. IX. 1862։

8 Նույն տեղում, 12. IX. 1862։

9 Ենթադրվել է, թե Շահնազարյանը Փարիզից Մանչեստր է մեկնել 1862 թ. (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1982, էջ 408, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 8, Երևան, 1982, էջ 427)։ Ճիշտն այն է, որ Շահնազարյանը Անգլիա է մեկնել 1863 թ. փետրվարի 14-ին [տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ. Շահազիզյանի ֆ., վ. 23, «Փարիզ», 20. II. 1863]։

10 Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 164։

նի փարիզյան հասցեն. „Debouest № 86. Mr. Chahnasarian“։[11] Հետագայում, հենց Շահնազարյանի տպարանում էլ Նալբանդյանը լույս է ընծայում իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը՝ Սիմեոն Մանիկյան կեղծանունով։

Կ. Շահնազարյանին, որպես հայ մտավորականության ներկայացուցչի, բնականաբար, ամենից առաջ հուզում էին հայ հասարակության զարգացման հարցերը Ռուսաստանի և Թուրքիայի սոցիալ-տնտեսական կարգերի պայմաններում, երկրներ, ուր ապրում էր հայության նշանակալից մասը։ XIX դ. 50—60-ական թվականներին, երբ աշխատավոր զանգվածների գրությունն ավելի ու ավելի անտանելի էր դառնում ֆեոդալական և կապիտալիստական շահագործման զուգակցման հետևանքով, նրա հայեցության մեջ առաջնահերթ նշանակություն է ստանում և առաջին պլան մղվում տնտեսական խնդիրը։ Երկրագործությունը նա համարում էր «մարդկային հարստության առաջին աղբյուր», ապահով կյանքի անհրաժեշտ նախապայման[12]։ Շահնազարյանը հատկապես ընդգծում է, որ երկրագործությամբ զբաղվելու դեպքում մարդիկ կվայելեին ոչ միայն բարօրություն, այլև կհասնեին քաղաքացիական ազատության։ «Եթե Հայաստանի մեջ երկրագործությունն ծաղկի, — գրում է նա,— ...տարակույս չկա, որ 15—20 տարվան մեջ ժողովուրդն նյութական լիություն վայելի, և լիութենեն, հայտնի է, որ կծնանին ամեն բաղաքական, մտավոր և ընկերական բարիք» (28. VI. 1864)։ Փաստորեն, Շահնազարյանը դիտակցում էր նյութական գործոնի վճռակամ դերը և համոզված էր, որ ա-

---

11 Տե՛ս ԳԱԹ, Մ. Նալբանդյանի ֆ., բաժին առաջին, վ. 14։ Ի դեպ, Նալբանդյանի ծոցատետրի հասցեների այս ցուցակում երկու անգամ հիշատակվում է անգլերեն գրված մի հասցե ևս։ Առաջին դեպքում այն գրված է այսպես. «LONDON 60. Haymarket street. Mr. Thomas (Turkish divan)» [Լոնդոն. Հեյմարքեթ փողոց 60. Պարոն Թոմաս/Թուրքական դիվան/]։ Երկրորդ անգամ հասցեն գրված է հետևյալ կերպ. «LONDON M. Thomas—Turkish—divan Haymarket street 60» (Լոնդոն, Մ. Թոմաս—Թուրքական դիվան, Հեյմարքեթ փողոց 60)։ Ցայսօր այս անունն անուշադրության է մատնվել նալբանդյանագետների կողմից։ «Արշալույս արարատյանի» նյութերը կարդալիս մեր ուշադրությունը գրավեց պարբերական 1857 թ. հունիսի 14-ի համարում տպագրված հետևյալ ծանուցումը. «Պոլսեցի Թովմասյան պարոն Մատթեոսը Լոնտոն Հեյ Մարքեթ փողոցը թիվ 63, սրճարան մը բացեր է. ուստի կհրավիրե նույն մայրաքաղաքը ճամբորդություն ընող յուր համագգի հարգելիները. որպեսզի բարեհաճին յուր սրճարանը երթալու, ուր տեղ կրնան հարկավոր տեղեկություններ ստանալ թե՛ հանգիստ և հարմար իշևաններ գտնելու և թե՛ Լոնտոնի երևելի տեղվանքը պտտելու համար։ Վերջապես պարոն Մատթեոսը պատրաստ է ամեն կերպիվ գոհ ընել իր սրճարանը դացող հայազգի ճամփորդները։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նալբանդյանն անգլերեն կամ ֆրանսերեն լեզվով հայկական ազգանունները երբեմն գրում էր փոքր-ինչ այլ կերպ, ինչպես, օրինակ, բանաստեղծ Խ. Միսաքյանի անունը՝ պարոն Միսաք, տպագրիչ Ճանիկ Արամյանի անունը՝ պարոն Արամ ձևով (տե՛ս ԳԱԹ, Մ. Նալբանդյանի ֆ., բաժին, վ. 14), ճիշտ կլինի ենթադրել, որ Թոմասը Թովմասյանի Եվրոպական ձևն է։ Այնուհետև, հասցեում գրված է Թուրքական դիվան։ Խոսակցական անգլերենում դիվան նշանակում է նաև խանութ։ Շատ հավանական է, որ Նալբանդյանը Թուրքական դիվան գրելով նկատի է ունեցել Թուրքիայից Անգլիա տեղափոխված պոլսահայ Մատթեոս Թովմասյանի՝ Լոնդոնում բացած խանութ-սրճարանը։ Հասցեի երկրորդ ձևում, առաջինի համեմատությամբ, կա աննշան թվացող մի տարբերություն։ Առաջինում հասցեատերը կոչվում է պարոն Թոմաս, իսկ երկրորդում՝ Մ. Թոմաս, այսինքն՝ Մ. Թովմասյան։ Այսպիսով, Նալբանդյանի ծոցատետրի և «Արշալույս արարատյանում» տպագրված ծանուցման հասցեները հուշում են, որ դրանք պատկանել են միևնույն անձնավորությանը՝ Մատթեոս Թովմասյանին։ 1859 թ. արտասահման ուղևորվելիս Նալբանդյանը, որն առաջին անգամ պետք է այցելեր նաև Լոնդոն և, բոլորովին անծանոթ լինելով քաղաքին, հավանաբար, ավելորդ չի համարել իր հետ վերցնել նաև Լոնդոնում բնակվող հայազգի վաճառականի հասցեն, մանավանդ, վերջինս պատրաստակամորեն առաջարկում էր իր ծառայությունները։

12 Տե՛ս «Երկրագունդ», 28. VI. 1864 (այսուհետև թերթի ամիս-ամսաթիվը՝ մեջբերումներին կից)։

ռանց տնտեսական հարցի լուծման անհնար էր հասնել քաղաքացիական բարօրության։

Երկրագործության զարգացումը լայն և նոր հնարավորություններ էր ստեղծում նաև վաճառականության համար։ Շահնազարյանը, վաճառականությունը համարում է «երկրագործության ծնունդ», երկրագործներին՝ դրա «հիմն, նեցուկ, մատակարար և կերակրիչ» (30. VII. 1863)։ Հենվելով բուրժուական տնտեսագիտական տեսությունների վրա, նա նշում է, որ ազգին հատկապես մեծ օգուտ կարող են տալ վաճառականական ընկերությունները։ Որպես այդ ընկերությունների օգտակարության ապացույց, Շահնազարյանն օրինակ է բերում Եվրոպայի և Ասիայի վաճառականներին, որոնք, ընկերություններ հաստատելով, «դույզն աշխատությամբ տիեզերաց ճոխությունն իրենց երկիրներն կքաշեին...» (14. VI. 1864)։

Շահնազարյանը առաջադրում էր նաև երկրագործական ընկերություններ, ուսումնարաններ հիմնելու խնդիրը։ Եվ նա շատ ավելի նպատակահարմար էր գտնում դրամն օգտագործել այդ նպատակների իրագործման, քան եկեղեցի կամ խաչկալ կառուցելու համար, և դա այն դեպքում, երբ ինքը հոգևորական էր։ «Մեք հավիտյան հանձն չէինք առնուր 40,000 լիրա ծախք ընել և Իզմիրի վոլկանիր հողի վերա այնպիսի մեծակառույց եկեղեցի կանգնել,— դրում է նա։— Ավելի ազգասիրական կսեպեինք... մեկ երկու պատանյաց և աղջկերանց և մի մասնավոր երկրագործական ուսումնարան բանալ...։ Մեք երբեք հանձն չէինք առնուր եկեղեցու մեկ կամ երեք փայտյա խաչկալ շինելու համար ոչ 3,000 և ոչ 1,000 լիրա անգամ այս անարծաթ ժամանակիս մեջ մըսխել» (Ն. տ.)։

Կ. Շահնազարյանի կարծիքով երկրագործության զարգացումը կհասցներ ազգի մեծամասնության բարեկեցությանը, որով և նա պայմանավորում էր անհատի բարեկեցությունը։ «Օր պիտի գա, և կանուխ, որ ամեն անհատ հասկընա, թե անհատի բարեկենդանությունն ընդհանուրի բարեկենդանութենե կախված է...» (30. VII. 1863)։

«Երկրագունդի» էջերում Շահնազարյանի արծարծած տեսակետները տնտեսական հարցերի ու պրոբլեմների վերաբերյալ պատահական երևույթ չէին հայ իրականության մեջ։ Այնպիսի հարցեր, ինչպիսիք են երկրագործական առաջավոր եղանակներով գյուղատնտեսությունը զարգացնելու, ազգային վաճառականություն կազմակերպելու խնդիրները, մինչ այդ արդեն քննվել էին Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ, արևմտահայ մամուլում, մասնավորապես՝ Ն. Զորայանի, Հ. Սրվաճյանի, Մ. Մամուրյանի, Հ. Շիշմանյանի և այլոց հոդվածներում, 1860 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում ստեղծված «Բարեգործական ընկերության» հայտարարության մեջ և այլն։

Ժողովրդին թշվառ վիճակից դուրս բերելու և նրա առաջադիմության գործում Շահնազարյանը որոշիչ նշանակություն էր տալիս լուսավորությանը։ Մեջբերելով Ռուսսոյի և Լեյբնիցի խոսքերն ազգային կրթության նշանակության մասին, նա գրում է. «Միևնույն խոսքն մեք ալ կկրկնեմք մեր սիրելի ազգայնոցն «կրթեցե՛ք մեր զավակներն, և ահա՛ 15—20 տարվան մեջ մեր ազգն կերպարանափոխ կըլլա. քանզի գիտությունն ամենայն բարյաց աղբյուր է. իսկ անգիտությունն՝ ամենայն չարյաց ծնող...» (21. III. 1864)։ Նրա խորին համոզմունքն է, որ որքան տգետ է հպատակ ազգը, այնքան ավելի ամուր է նրան սեղմող բռնակալական լուծը։ Այդտեղից հետևում էր, որ կրթությունը, լուսավորությունը ժողովրդին կընձեռեին ազատագրման հնարավորություններ։ «Հպատակ ազգերու տգիտությունն բռնավոր կառավարությանց փրկության խարիսխն է,— կարդում ենք «Ի՞նչ է ազգայնության ոգին» հոդվածում,— հակադարձաբար, անոնց հրահանգությունն իրենց բռնավորաց նավաբեկություն, կործանումն և կորուստ կծնանի» (28. III. 1864)։

Կ. Շահնազարյանին խիստ մտահոգում էր հայ ժողովրդի չափազանց հետամնաց վիճակը։ Նրան խոր վիշտ էր պատճառում այն միտքը, որ «հայության զանգվածին մեջ գիտությունն և կրթությունն, մանավանդ մեր ազգի ո-

գոն համար գիտություն և կրթություն տակավին արմատ չեն ձգեր» (18. IV. 1864)։ Այս ծանր վիճակի մեջ էական որևէ փոփոխություն չէին կարող մտցնել նաև այն մի քանի բացառիկ «ճյուսիսային ազգի նմանյալ» անհատները, որոնք լեզու և գիտություն սովորելով «առ ժամանակ մի կփայլին, առ ժամանակ մի հայ հորիզոնի վերա կշողշողան և դարձյալ կանհետանան» (Ն. տ.)։

Կ. Շահնազարյանը համոզված էր, որ միայն համընդհանուր, համազգային լուսավորությունը կարող էր արդյունավետ և օգտակար լինել ժողովրդի համար։ Այդ պատճառով էլ նա անհրաժեշտ էր համարում հիմք դնել «ազգային դաստիարակության» (Ն. տ.)։ Սակայն նա չկարողացավ հաղթահարել լուսավորականության պատմական այն սահմանափակությունը, որ ենթադրում էր մարդկանց վիճակների մեջ եղած տարբերությունը վերացնել դաստիարակության և կրթության միջոցով։ Այնուամենայնիվ, չնայած այս հանգամանքին, Շահնազարյանի լուսավորական-դեմոկրատական այս մտայնությունը առաջադիմական երևույթ էր ժամանակի հասարակական մտքի զարգացման պայմաններում։

Ելնելով ազգի լուսավորության, դաստիարակության խնդիրներից, Շահնազարյանը մեծ տեղ էր տալիս լրագրի հրատարակությանը։ «Երկրագունդի» խմբագրի կարծիքով, մամուլը նպաստում էր հասարակության առաջընթացին, ստեղծում հասարակական կարծիք, որից վախենում էին անգամ հզոր բռնակալները։ «Լրագիրն բանիբուն կորովամիտ և լուրջ անձանց փետուրեն ելլելով,— գրում է նա,— կարող է նոր, ճշմարիտ և ուղիղ գաղափարներ և սկզբունք երևան հանելով, նորոգիչ և փրկաբար ճշմարտություններ քարոզելով, շարունակ իր ընթերցողաց լսելյացն և երևակայությանն զարնելով՝ հասարակաց կարծիք ըսված ուժն ստեղծել, որի առաջ, նաև 100,000 սվիններու վրա կեցյալ բռնակալներն անգամ կդողան...» (30. VII. 1863)։

Կ. Շահնազարյանը, ձեռնամուխ լինելով «Երկրագունդի» հրատարակությանը, գտնում էր, որ այն պետք է «ժողովրդի էական պետքերը ճանաչի և անոնց ծառայի բարոյական սերմեր, ազգասիրական ոգի, ազատության սեր և կարևոր հմտություններ տարածելով» (20. VII. 1864)։ «Երկրագունդը» նա համարում էր «ազգային և ազատ» լրագիր, որը միշտ պատրաստ էր արձագանքել ազգի շահի դեմ գործած անիրավություններին, ինչպես նաև նրա օգտին կատարված բարերարություններին (14. VI. 1864)։ «Երկրագունդն» անխընա պայքարելու էր բռնության, հարստահարության և օրինազանցությունների դեմ՝ ով էլ լիներ դրանց գործադրողը՝ բարձրաստիճան աշխարհական, թե վեհագույն հոգևորական (20. VII. 1864)։ Կ. Շահնազարյանը գիտակցում էր, թե որքան մեծ պատասխանատվություն էր վերցրել իր վրա՝ հանձն առնելով «Երկրագունդի» խմբագրումն ու հրատարակումը. դա իրեն հնարավորություն էր տալիս գործելու անհամեմատ ավելի ազատ պայմաններում՝ Թուրքիայի և Ռուսաստանի իր հայազգի պաշտոնակիցների համեմատությամբ։ «...Պարագաներն ավելի ձեռնտու են մեզ,— գրում է նա,— և մեր տեսությունն ազգի շահերու վերա ավելի ընդարձակորեն տարածելու, անոնց խորն թափանցելու և պատռելու այն քողն, զոր տեղական հանգամանքն և միապետական գավազանի ազդեցությունն կծածկեն մեր պաշտոնակիցներեն» (2. V. 1864)։

Կ. Շահնազարյանը ժամանակի հայ իրականության մեջ առաջադիմական, օգտակար թերթերի շարքում առաջին հերթին նշում էր Հ. Սվաճյանի «Մեղուն», որն արևմտահայության ամենաառաջադիմական, դեմոկրատական պարբերականն էր։ Նա դրականորեն էր գնահատում նաև «Մասիսը», «Վարագայի հավատիսը». «Կան ալ բարեբախտաբար անկաշառ թերթեր, ինչպես Մեղու, Վարագայի հավատիս, Մասիս և այլն, որք մեր կրոնից և ազգության պաշտպանության համար, կրնան մեջերնին միաբանություն հաստատել և հասարակաց թշնամիի դեմ անառիկ թումբեր կանգնեցնել...» (23. V. 1864)։ «Երկրագունդի» էջերում անհաշտ պայքար էր մղվում ռեակցիոն-պահպանողական պարբերականների՝ «Մեհմուայի», «Երևակի», «Ջոհալի» դեմ։

«Երկրագունդի» հրատարակման կապակցությամբ Շահնազարյանն անդրադարձել է աշխարհաբարի և գրաբարի պրոբլեմին։ Իր պարբերականի առա-

ջին համարում տպագրված հայտարարության մեջ նա գրում է, որ լրագիրը կը-շարադրվի աշխարհաբարով, քանի որ դա էր ժողովրդի համար հասկանալի և ընդունելի, իսկ «մեր թարգմանչաց լեզուն աստվածապաշտության և սրբազան ճոխաբանության կպահեմք» (30. VII. 1863)։ Սակայն նախապատվությունը տալով աշխարհաբարին, «Երկրագունդի» խմբագիրը մտադիր չէր անտեսել դրա թերությունները, անհարթությունները. նա պատրաստ էր դրանք «ըստ կարելոյն ուղղել ջանալով՝ մեր աշխարհաբառն կարգավորել և հաստատ հիմանց վրա դնել» (Ն. տ.)։ Շահնազարյանի «հանապազորյան» ուխտերից մեկն էր աշխարհաբարը քերականական ճիշտ կանոնների վրա դնելով, դարձնել «հասարակաց բարբառ» (Ն. տ.)։ Նա կոչ էր անում ազգային մյուս պարբերականներին նույնպես իրենց էջերում արծարծել այդ կարևոր պրոբլեմը, քանի որ լեզվի մաքրությունը «այլ բարեկարգությանց համեմատությամբ, ոչ սակավ կարևոր է և շահեկան. վասնզի լեզվի առաջադիմությունն եղծմունքով՝ չըլլար» (9. V. 1864)։

Կ. Շահնազարյանը, ազգային առաջադիմության գործում որպես վճռական գործոն ընդունելով լուսավորությունը, դրա հետ մեկտեղ չէր բացառում ժողովրդի զինված պայքարը՝ ընդդեմ հարստահարության և ստրկացման։ Նա լիովին արդարացնում էր ժողովրդական շարժումները, որոնք ուղղված էին հակաժողովրդական քաղաքականություն վարող կառավարությունների դեմ։ Նա գտնում էր, որ այնտեղ, ուր կա արդար օրենք և օրինավոր իշխանություն, յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է նեցուկ և պաշտպան հանդիսանալ նրան։ Եվ «պարտավոր է ընդհակառակն, ուր ոչ արդար օրենք կա և ոչ օրինավոր իշխանություն ո՞չ ապաքեն ամեն մարդ, իհարկե ստիպյալ, իր ընչից և պատվո և կենաց պաշտպանելու պարտական է, և կատարյալ իրավունք ունի։ Ո՞վ կարե այս բնական, համաշխարհական և հավիտենական օրենքս ջրել» (25. VIII. 1864)։

Կ. Շահնազարյանն այս կապակցությամբ արդարացնում է նաև ընդհատակյա ընկերությունների գոյությունը։ Եվ նա կոչ է անում պայքարել ոչ թե դրանց, այլ այդ ընկերությունները ծնող պատճառների դեմ։ Այդ առիթով նա քննադատության նշանախեց է դարձնում պոլսահայ ամիրայության և կղերականության գաղափարախոս Հ. Զամուռճյանին, նրա թարգմանած և ծանոթագրած «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» աշխատության հետադիմական գաղափարախոսությունը։ Դիմելով Զամուռճյանին, նա գրում է. «...Դու գաղտնի ընկերությանց գեշությունն ծանուցանելեն առաջ, անոնց աղբյուրն, ծնողն և «կզբնապատճառն գտնեիր և արմատեն խլեիր և ոչ թե հիմար այգեգործի նըման, թյունավորյալ ծառն արմատեն կտրելուն տեղ, անոր ճյուղերն միայն, չշտելով բարոյագիտի պարտքդ կատարած սեպեիր...» (30. V. 1864)։ Շահնազարյանը համոզված է, որ այդ ընկերությունները կգոյատևեն այնքան ժամանակ, քանի դեռ չեն հաստատվել ազատությունն ու արդարությունը։ «...Միշտ գաղտնի ընկերություններ եղեր են և պիտի ըլլան, մինչև որ ամեն մարդ իր համոզումն, իր խղճի վկայությունն ազատորեն և աներկյուղ հրապարակելու և լուծումն ստանալու իրավունք ունենա»,— գրում է նա (21. VI. 1864)։ Նա գաղտնի ընկերություններ ծնող պատճառ համարում էր բռնությունը. «...Գաղտնի Ընկերություններն պատճառ կամ ծնող չեն. այլ արդյունք կամ հետևանք միայն, գաղտնի ընկերությանց ծնողն կամ պատճառն բռնությունն է միայն և ոչ այլ ինչ...» (30. V. 1864)։

Պոլսահայ խավարամտության դեմ Կ. Շահնազարյանի վարած սկզբունքային պայքարը, սոցիալ-քաղաքական բռնություններին բռնությամբ դիմադրավելու գաղափարը նրան բնութագրում է իբրև առաջադիմական գործիչ։

XIX դ. 50—60-ական թվականներին հայ ժողովրդի միասնականության, ազգայնության պահպանման վճռական գործոններից մեկը շարունակում էր մնալ հայ եկեղեցին, լուսավորչական կրոնը՝ որպես կենտրոնածիգ ուժ։ Հետամնաց, նախապաշարված ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ քրիստոնեությունը շարունակում էր մնալ քաղաքական և սոցիալական ինք-

նապահպանման միջոց։ Այս հանգամանքը շատ լավ էին հասկանում հայ առաջադիմական գործիչները։

Կ. Շահնազարյանը նույնպես գիտակցում էր լուսավորչական կրոնի նշանակությունը՝ որպես հայ ժողովրդի համախմբման և հարատևման գլխավոր գործոն։ Հայ եկեղեցու հեղինակությունը բարձրացնելով, նա աշխատում էր դրա միջոցով խոչընդոտել միսիոներների քարոզչությունը, որը հետամտում էր ժողովրդի հոգևոր միասնության խարխլումը։ Խորապես ըմբռնելով այս հանգամանքը, «Երկրագունդի» խմբագիրն անհաշտ պայքար էր մղում հայ ժողովրդի կրոնափոխության, հայ եկեղեցու՝ կաթոլիկ կամ բողոքական եկեղեցիների ազդեցությանը ենթարկվելու դեմ։ Այդ նպատակով նա իր պարբերականի մի շարք համարներում (23. V. 1864, 30. V. 1864, 21. VI. 1864) շարունակաբար տպագրում էր «Հիսուսյաններ» վերտառությամբ հոդվածաշարը, որտեղ լուսաբանում էր վերջիններիս պատմությունը։ Ի դեպ, նույն վերնագիրն ուներ և նույն նպատակն էր հետապնդում նաև Մ. Նալբանդյանի «Հիսուսյանք» հոդվածը, որը ժամանակին տպագրվել էր «Հյուսիսափայլի» էջերում և որն էլ, մեր կարծիքով, մղել է Շահնազարյանին գրելու իր հոդվածաշարը։ «Հիսուսականության ոգին է, ի սկզբանե հետե,— գրում է «Երկրագունդի» խմբագիրը,—բանականությունն անբանության փոխել, կենդանին դիակ ընել, անոր հոգին, միտքն, կամքն, ընտրությունն և գործունեությունն չքացնելով զանիկա անշունչ և շարժում մեքենա ընել...» (30. V. 1864)։ Հիսուսյանների չարագործություններին ավելի մանրամասն ծանոթանալու, նրանց իսկական էությանը հասու լինելու համար նա ընթերցողին խորհուրդ էր տալիս կարդալ է. Սյուի «Թափառական հրեան», որը ֆրանսերենից թուրքերեն էր թարգմանել «ազգասեր ուսումնական» Կարապետ Փանոսյանը (ն. տ.)[13]։

Փորձելով դիմագրավել կրոնափոխությանը, նա աշխատում էր ցրել ժողովրդի մեջ տարածված այն պատրանքը, թե իբր բողոքականություն կամ կաթոլիկություն ընդունելով, նրանց դրությունը կբարելավվի, թե իբր նրանք կըվայելեն եվրոպական տերությունների հովանավորությունը։ Նա դա համարում էր «չնչին հույս, անձնախաբ պատրանք» (ն. տ.)։ Իբրև իր ասածի ապացույց, «Երկրագունդի» խմբագիրը մեջ է բերում 1856 թվականի Փարիզի դաշնագրի այն հատվածը, որով Թուրքիայում քրիստոնյա տերությունների մասնավոր պաշտպանությունը վերացվում էր և նրանք «ճավաքարար միայն և անխտիր ամեն քրիստոնյա ժողովրդոց պաշտպանություն ընելու կարող են» (23. V. 1864)։

Ընդունելով հայ եկեղեցին, լուսավորչական կրոնը՝ որպես հայ ժողովրդի ազգապահպանման հիմնական միջոց, Շահնազարյանը միաժամանակ խիստ քննադատության է ենթարկել հոգևորականությանը, նրա անարժան վարքն ու գործունեությունը, ժողովրդի նկատմամբ գործադրած բռնությունները՝ լիներ դա հասարակ քահանա, թե կաթողիկոս (9. V. 1864)։ Նա դառնությամբ է նշում այն փաստը, որ բարձրաստիճան հոգևորականությունը, որի ամենաառաջին պարտավորությունն էր պատրաստել եկեղեցու համար կիրթ սպասավորներ և ազատել ժողովրդին միսիոներների որոգայթներից, ամենևին չի հոգում այդ մասին։ Նրանց գործունեությունն ուղղված էր ոչ թե ժողովրդի իրական պետքերը հոգալուն, այլ անձնական շահ ստանալուն. «...Մեր կարգավորներն ըստ մեծի մասին մի-մի վանք նստած, ժողովուրդն անխնամ երեսի վերա ձգեր են. եթե տարին մեկ երկու անգամ իրենց անապատեն դուրս կելլեն. անոր շարժուիթ պատճառն ալ հայտնի է, և ամոթալի հոս հիշել» (13. VII. 1864)։

Հայ կղերականության մեծամասնությունը շարունակում էր մնալ տգետ։ Խոսելով նրանց մասին, Շահնազարյանը հատկապես ընդգծում էր վերջիններիս ծառայողական ոգին՝, որը «հեզության սահմանն անցնելով ստրկության կմոտենա» (18. IV. 1864)։ «Երկրագունդի» խմբագրին մեծ զայրույթ էր պատ-

---

13 Ի դեպ, Նալբանդյանը ևս մեծ նշանակություն է տվել այս աշխատությանը։ Նրա թարգմանությամբ լույս էր տեսել դրա առաջին հատորը։

ճառում հատկապես այն փաստը, որ հայ եկեղեցականներից շատերն ի չարի էին գործադրում իրենց հոգևոր պաշտոնը։ Եվ, դիմելով կրոնական առաջնորդներին, նա պահանջում էր, որպեսզի նրանք «աղգի վանքն քանք և բուրս ընելուն տեղ ի գայթակղություն ճշմարիտ Հայոց և հուրախություն Հիսուսյան Հայոց կրթության վարժարան ընեն» (9. V. 1864)։ Հակառակ, դեպքում նա սպառնում էր հրատարակել նրանց գործունեության վրա լույս սփռող մի շարք նյութեր, որոնք իր ձեռքի տակ էին, և «կարևոր մեկնություն տալ ի գիտություն ամենեցուն» (Ն. տ.)։

Այսպիսով, Կարապետ Շահնազարյանի սոցիալ-տնտեսական հայացքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը մեզ բերում է այն համոզման, որ XIX դ. 60-ական թվականներին, որպես առաջադեմ գործիչ և հրապարակախոս, ժամանակի կարևոր, հրատապ խնդիրների ու պրոբլեմների լուծման հարցում նա հանդես է եկել հետադիմության և խավարամտության դեմ։

КАРАПЕТ ШАХНАЗАРЯН И ЕГО ГАЗЕТА «ЕРКРАГУНД»

КАРИНЕ АГАМЯН

Резюме

Представитель просветительской мысли 50—60-х гг. XIX в. К. Шахназарян является одним из замечательных деятелей армянской культуры и общественной мысли этого периода. В статьях, опубликованных в газете «Еркрагунд», преодолевая рамки консерватизма, он откликался на передовые общественные идеи своего времени. Он был убежденным противником социально-политического насилия и выступал за свободу угнетенных народов. «Еркрагунд» подвергал критике реакцию и мракобесие, защищал интересы ашхарабара. Он придерживался прогрессивных ориентаций в вопросах национального земледелия и торговли, а также развития производства..